


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Ի հոգի թիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2,60 Տոյար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Ծրանշարի ստոր
20 ամսիկով

ՊԱՅՄԱՆՔ

Rédaction du journal
„Ipravounk“
VARNA (Bulgarie)
Редакция
на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България)

Գրողները եւս
չեն տրուիր

ԺՈՂՈՎՈՐԴԻ ՍԹԱՓՈՒՄԸ

Ժողովուրդ մը կորստեան դատապարտուած է երբ անտարբեր կը մնայ իր պատկանած համայնքին կամ ցեղին գոյութեան սպառնացող երեւոյթներուն առջեւ։ Ամէն ցեղ դարեւրու ընթացքին մէջ, մէկէ տեւի անգամներ իրեն գոյութեան հիմքը սարսուղ փոթորիկներու հանդիպած է, եւ անտարբեր մնացողը միշտ տուժած է։ այսպէս կորսուած են ազգերու պատմութեանց մէջ մեզ ցոյց տրուած շատ մը ցեղեր։ Իսկ որոնք որ գիտցած են իրենց ընդհանրական շահերը հաւաքարար պաշտպանել փառնք մնացած են ու կոսպրին ցարդ առաւել կամ նուազ նպատակներ պայմաններու տակ, իրենց ծագումով շատ հին ըլլալով հանգերձ։

Ցարդ իրենց գոյութիւնը պահպանող հին ազգերու շարքին մէջ է Հայ ազգը եւս, որ Պարսիկներու, Արաբներու, Թաթարներու, Եգիպտացիներու եւ վերջապէս Թուրքերու բարբարոս արշաւանքներուն եւ անպատասխանատու նախճիրներուն ենթարկուած, բայց կրցած է իր գոյութիւնը եւ ցեղային յատկութիւնները պահպանել ու հասնիլ մինչեւ ներկայ քաղաքակիրթ դարաշրջանը, ուր չէ կարելի հին, բարբարոս դարերու չափ անպատասխանատու կերպով ամբողջ ազգ մը միայն նախճիրներով բնաջնջել, եթէ այդ ազգը պիտէ իր ցեղային գոյութիւնը հաւաքական ճիգերով պաշտպանել ու իր բռնաբարուած իրաւունքները համաշխարհային դատաստանին ենթարկել առնաբար։ Իսկ երբ ժողովուրդ մը անզգայ է իր ցեղային ներքին ու արտաքին ցաւերուն ու անոր մէջ մի անհատ կը մտածէ միմիայն իր անհատականութեան վրայ, այդ ժողովուրդը ներկայ դարաշրջանի մէջ առանց նախճիրի, առանց բիրտ հալածանքի ալ հանդիպելու, կորսուելու դատապարտուած է։ որովհետեւ աշխարհի ամբողջ կեանքը, սկիզբէն մինչեւ այսօր, գոյութեան անվերջ կռիւ մը եղած է եւ պիտի շարունակուի այդ կռիւը դեռ երկար ստեն։ Հաւաքաբար ինքզինքնին չպաշտպանող սգաբերն են որ այդ կռիւն մէջ կրնան, կը փճանան։

Արդ, բարբարոս դարերու մէջ չը փճացող հայ ազգը պէտք է որ այս քաղաքակիրթ դարու մէջ փճանայ, ուր վերջապէս համաշխարհային դատաստան մըն ալ կայ, որ գոնէ աստիճան մը չձգէր ուժեղին բոլորովին յաջողութեամբ բնաջնջել տկարը, որ գիտէ հաւաքական ուժով ինքզինքը պաշտպանել։ Ինքնապաշտպանութենէ ձե-

ռնթափ եղողներն են որ բոլորովին կորսուելու դատապարտուած են այսօր իսկ։ որոնք համար համաշխարհային դատաստանը միջամտելու իրաւունք չունին։ որովհետեւ իր ոտքովը անշնորհ սպանդանոց գոցող ոչխարին համար ոչ ոք դատախազ չի կանգնիր։

Այդ սպանդանոցի սեւմին վրայ կանգնած ազգային գոյութեան կռիւն է որ այսօր մղել կոչուած է հայ յեղափոխական կազմակերպութիւնը, որուն ետեւը պէտք է կանգնած ըլլայ ամբողջ հայութիւնը, տրամադրելի ընելով իր ուժերը կողող բազուկներուն։ Բայց ի՞նչ ապշութիւն հայ ժողովուրդին համար, երբ նա կը տեսնէ թէ, կռույ սա վճական օրերուն մէջ այդ բազուկները զիրար կը հրժակեն փոխանակ թշնամին հարուածելու։ Այս պարագային տակ ժողովուրդին անսարքերութիւնը դաւաճանային պիտի ըլլար եթէ իսկապէս անտարբեր հանդիսատեսը մնար իր առաջապահ գնդին եղբայրացաւ հրժակուեցանք։ Բայց ուրիշ են յայտնելու թէ հայ ժողովուրդը սթափած է իր անտարբերութեան մահաբեր քունէն եւ չուզեր, չը ներքի իսկ որ գոյութեան կռուին համար մարտիրոսանալ ուխտող հայ յեղափոխականները ասկէ անդին ալ զիրար հրժակեն։ Այս սթափումին ցնցող ազդեցութիւնը արդէն տարիներ առաջ տուաւ արտասահմանի հայութիւնը իր մէջ կազմելով Միութեանական խումբեր որոնք իրենց նըպատակ ունին հայ յեղափոխական կուսակցութիւնները սթափելու աշխատիլ։

Այսօր ալ Միացեալ Հնչակեան կեդրոնին սա ապանելի պառակտումին սուղեւ բնականօրէն հայ ժողովուրդը իր զգայնութիւնը ցոյց պիտի տար եւ հեղինակաւոր ծայրով մը պառակտուողները ի կարգ հրաւիրէր։ Ահա այդ ծայրն է որ այսօր Վառնայէ կը բարձրանայ եւ կը սպասուի որ բոլոր հայաբնակ անկիւններէն արձագանգ գտնէ։ Երկու, չափաւ առաջ երիցս կազմուած լսարաններուն մէջ տեղոյս հայերուն «կեցցէ՛ Միութիւն» աղաղակներէն եւ ցասկոտ խանդավառութիւններէն վերջ, այսօր հանրագորութիւն մըն է որ կը պատրաստուի ուղղուած Հնչակեան պառակտեալ երկու կեդրոններուն, պահանջելով որ Միութիւնը չի քակուի, եւ երկպառակութեամբ վերջացնելու համար, անպատճառ Պատգամաւորական Ընդհանուր Ժողով մը գումարուի, որ միայն կրնայ վէճի առարկայ եղած խղիւղիկը ձեռնհասօրէն քննել, կարգադրել եւ յարմարագոյն անձերէ ընտրել կեդրոնի վարչութիւնը։

Ժողովուրդի այդ արդար պահանջին

առջեւ՝ ուր անձի խնդիր երբեք չկայ, չէ կարելի երեւակայել որ երկու հատուածներէ մին կամ միւսը հակառակ ընթացք բռնէ եւ կամ չուզէ ճանչնալ այդ ծայրին կարեւորութիւնը։ որովհետեւ այդ տեսակ վարմունք մը ոչ թէ միայն տիկտատորական ու բռնապետական կըլլայ, այլ նաեւ կործանարար՝ ըմբոստ հատուածին, որուն վրայ կը ծանրանայ ապագայ ամբողջ պատասխանատուութիւնը։

Կը շեշտենք, երկու հատուածին համար ալ ժողովուրդի այս պահանջին առջեւ փախչելու երբեք արդարանալի ճամբայ չը կայ։ Բախչիլ փորձողը թէ ինք կը տուժէ եւ թէ ազգային դատին կը վնասէ, իսկ անգամ մը սթափած ժողովուրդը ալ կանգ չառնէր այդ խոչնդոտներու առջեւ եւ իր ուժը տրամադրելի կընէ միայն անոնց որոնք պիտի գիտնան իրմէ դուրս առնելէ զատ իր արդար պահանջներուն եւ ծայրին կարեւորութիւնը ճանչնալ։ Ի՞նչպէս կարելի է արհամարհել ժողովուրդի ծայրը, չը ճանչնալ հեղինակութիւնը անոր օր իր ծոցէն արտագրած է ամբողջ հայ յեղափոխական բանակը, իր դրամովը սնուցած է ու պիտի սնուցանէ ամէն ազգային գործիչներ, իր արիւնովը ներկած է հայրենի հողը եւ վերջապէս այսօր ալ հայրենիքի փրկութեան դատին յաղորդութեանը համար յեղափոխական ուժերու միացումը, ամրապնդումը կարելի ընող միջոց մը կառաջարկէ, այն է պատգամաւորական ընդհանուր Ժողով կազմել։

Այո՛, ալ եւս անտարբեր չուզեր մընալ ժողովուրդը։ սթափած է ան, եւ այս սթափումն է որ հաւաքական ուժ պիտի գոյացնէ եւ մեր ազգային գոյութիւնը ապահովէ։

ՕՐՈՒՆԱ ՔԱՂԱՔԱՆՈՒԹԻՒՆԸ

ՅՐԱՆՈՒ

Հազիւ թէ գէշ աղէկ վերջ մը տրուեցաւ Տրէյֆիւս հարկարպետին վերաքննութեան ծանօթ դատին, ու արդէն իսկ կղերական խնդիրը, մանաւանդ կրօնական միաբանութեան խնդիրը, Ֆրանսան նորանոր տագնապնդելու, նորանոր խառնակութեանց կսկսէր մատնել։ Տրէյֆիւսի խնդրոյն առթիւ ծագող վէճերը, ինչպէս յայտնի է, համարէն Ֆրանսան բաժնէր էին

երկու անջատ մասերու։ մէկ կողմէն յանուն արդարութեան ու մարդկային իրաւունքի՝ Տրէյֆիւսի հրապարակային վերաքննութիւնը կը պահանջուէր։ միւս կողմէ, Տրէյֆիւսի դատաւարութիւնը ու դատապարտութիւնը իբր օրինաւոր կը նկատուէր ու անոր վերաքննութեանը մէջ պիտական փոփոխութիւնը կը նշմարուէր։ առաջին դատական կարգին կը պատկանէին Ֆրանսայի ծայրայեղ յառաջդիմութեանց կուսակից տարրեր, ընկերվարականները, զիսաւորաբար, երկրորդին կողմը կը բռնէին բարձր զինուորականութիւնը ու կղերական գերիշխող հիմնարկութիւնները։

Շնորհիւ երկարատեւ բռնութեամբ քննարկու, վերջնական յաղթանակը մնաց վերաքննութեան կուսակիցներուն։ Տրէյֆիւս Ստանայի կըղզիէն, ուր փակուած կը մնար, Ֆրանսա բերուեցաւ ու Ռենի Զինուորական Ատենին կողմէ վերջապէս քննուեցաւ։ Հանրապետութեան Նախագահին մէկ հրամանագիրը զայն ներումի արժանի ըրաւ ու վերջապէս Երեսփոխանական Ժողովոյ մէկ քուէարկութիւնը Տրէյֆիւսի խնդիրը վերջնականապէս փակուած հռչակեց։

Բայց ամէն բան տակաւին չէր վերջացած, կամ աւելի ճիշդը, ամէն բան տակաւին նոր սկսելու էր։ Տրէյֆիւսի խնդիրը ցոյց տուեր էր թէ զինուորական ու կղերական կուսակցութիւնները ի՞նչ վիթխարի ազդեցութեան մը տիրացեր էին, ու ինչպէս անգույն անդադար հետամուտ էին Հանրապետական գերութեան դէմ դաւելու եւ միապետութեան վերականգնումը պատրաստելու։

Տրէյֆիւս ազատ էր, բայց հանրապետութեան կուսակիցները լուրջմբռնել էին թէ Հանրապետական հիմնարկութեան թշնամիները միշտ կանգուն կը մնային։ այդպէսով ահա ծնունդ առաւ զինուորական նութեան ու կղերականութեան դէմ յամառ ու անբողք ոգորում մը, թէ՛ խորհրդարանին մէջ, թէ՛ լեռնազրույթեան մէջ, թէ՛ հրապարակային ժողովներու մէջ։ Զինուորականութեան դէմ մըղ

ուած կռիւր նախ կը յարձակէր ջինուորական Ստեաններու ապօրինի գոյութեան դէմ. կղերական նուիրեան գէժ մղուած կռիւր նըպատակ ունէր նախ Կրօնական Միաբանութեանց գոյութեան վերջ մը տալ:

Ջինուորական Ստեաններու գէժ կռիւր տակաւին կը շարունակուի ու «Մարդկային իրաւանց Ջինուորացութեան» նախաձեռնութեամբը, Ֆրանսայի ամէն կողմերը անոնց ջնջուելուն ի նպատակ հազարաւոր ստորագրութիւններ կը հաւաքուին. բայց կրօնական միաբանութիւնները արդէն զգետնուած են:

Ուրիշ ատեն նոյն այս էջերուն մէջ մենք ցոյց տուինք թէ ինչպէ՞ս Վալտէր-Ռուսոյի դաշխիճը 1904 յուլիս ամսուն խորհրդարանին քուէարկել տուէր էր կանոնադիր մը, որուն համաձայն կառավարութեան չարտօնուած ու է միաբանութիւն գոյութիւն ունենալու իրաւունքէն կը զրկուէր. Վալտէր Ռուսոյի դաշխիճը հրաժարեցաւ, առանց այս օրէնքին գործադրութիւնը ապահովելու. այս պաշտօնը կը վիճակէր անոր յաջորդին. մնաց որ, պարագաներն ալ մեծապէս փոխուէր էին. անցեալ ապրիլ ամսոյ մէջ տեղի ունեցած նոր երեսփոխանական ընտրութիւնները կը կազմէին նոր Երեսփ. Ժողով մը, որուն մէջ կղերական ու շինուորական կուսակցութեանց պաշտպանները մեծապէս տկար կը մնային:

Նոր դաշխիճը պաշտպանող մեծամասնութիւնը դաշնակցութիւն մըն էր կարծիքի ու ծրագրի կողմէ իրարու ներհակ նպատակներու ձգտող չորս հատուածներէ բաղկացած, որոնք սակայն կը միանային կղերականութիւնը ու զին-

ւորականութիւնը ջախջախելու, ու հանրապետութեան վերջնական յաղթանակը յաջողցնելու ուղիովով. իրաւ ալ, կառավարութիւն ու մեծամասնութիւն, համախորհուրդ, կղերական հաստատութեանց գէժ անողոք հալածանքի մը ձեռնարկեցին. Վալտէր-Ռուսոյի միաբանական օրէնքը, հակառակ բուն ընդդիմութեանց, ամենախիստ կերպով գործադրուեցաւ. արտօնութիւն չունեցող բոլոր միաբանութիւնները անմիջապէս փակուեցան:

Իսկ արտօնութիւն խնդրող ուրիշ բազմութիւ միաբանութիւններու ալ իսպառ փակուեցաւ. Գրանսայի մէջ կրօնական միաբանութիւններ գոյութիւն պիտի չունենան. անոնք դպրոցներ պիտի չկրնան բանալ, վասն զի զաւակ մը կը թելու մենաշնորհը անոնց կը զլացուի ու պետական իրաւունք միայն կը համարուի. նոյնպէս առեւտրական ձեռնարկներու պարագով կրօնական միաբանութիւններն ալ կը ջնջուին. այսպէսով կռիւի կարգը կուգայ զինուորականութեան վրայ. արդարեւ, Ժան Ժո. Լէս արդէն իսկ պաշտօնապէս Տրէյֆիւսի խնդիրը վերաբարձած է ու կառավարութիւնը անոր համաձայն է. Տրէյֆիւսի խնդրին մէջ խարդախութիւն ընող մէկ քանի բարձր զինուորականներու վրայ քննութիւններ պիտի կատարուին:

Կղերականութեան վերջ զինուորականութիւնն ալ իր պատիժը պիտի ընդունի:

ՈՂՈՐՄԵԼԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉԸ

Պ. Ռուբէն Կարապետեան՝ ներկայացուցիչ Պուլկարիոյ եւ Ռուսոյի Սագունի-Արզու մանեանց կեդրոնի կողմէն, ինքզինքը ստիպողական հարկին մէջ կզգայ, պաշտպանուելու Պ. Գ. Չիթճեանի մտրակին հարուածներէն:

Կարգադրեալ անշուշտ «Ե...»-ի 504 թիւին մէջ իր ողորմելի յօդուածը, ուր Պ. Ներկայացուցիչը, արտաքինապէս մոլեգնած Չիթճեանի անխնայ հարուածներուն տակ, ցած մարդոց սովորական գէնքին կը դիմէ ու անամօթ հայոցութիւններու շարք մը թող կուտայ, զորս, ինչպէս կերելի, իղձի մտքը ուսած է իր երկու պատուական վարպետներէն:

Եւ որովհետեւ ներկայացուցիչ Պ. Ռ. Կարապետեանի «ժամանակը շատ սուղ է» (111), եւ ալ պիտի ջանամ կարելի եղածին չափ կարճ խօսիլ:

Պարոնը կը հաճի՞ ըսել ինծի թէ, ի՞նչ նպատակով դրկած են զինքը Պուլկարիա:

Պիտի կրնա՞յ ուրանալ թէ, իր պաշտօնը ուրիշ բան չէ, եթէ ոչ մասնաճիւղերը բաժնելու ու կիթերը յուղելու գերազանցօրէն կործանարար ու տխուր դեր մը:

Ուր են, չենք տեսներ կոր, այն «տօքիւման»ները, որոնք հեղինակ «Իրարու ետեւից», երեսան կուգան եղեր. հաստատուելու համար այն լիրբ զրպարտութիւնները՝ որոնք հրատարակուեցան Ռուսոյի Հնչակի մը մէջ, ի՞նչու Պ. Ռ. Կարապետեան չէ հաճած անոնցմէ գոնէ մէկ երկուքը թուելու մեղք. ա՞յս ալ «ժամանակի սուղ ըլլալուն» համար է...:

Պ. Կ. Փափագեանի վերաբերած նամակին վերջին մասը միայն հրատարակուած է անորակելի Յայտարարութեան մէջ: Անիմաստ պարբերութիւն մը պարզապէս:

Ի՞նչ անպատու լրբութիւն սակայն, երբ Պ. Կարապետեան կուզէ հաւատարմել թէ, ամբողջ նամակը հրատարակուած (?) է հոն... Կը թելադրեմ զինքը զոյգ մը անոնց գնել, որպէսզի

աւելի յստակօրէն կարենայ կարգաւ չնայեալիկ պաշտօնական(?) յայտարարութիւնը:

Ռ. Կարապետեանի դերը իսկապէս տխուր ու աղէտալի է: Այդ իր տեսակին մէջ եղակաւ ներկայացուցիչը, համաճարակ ախտի պէս կը սպրդի տղաքէն ու միամիտ մարդոց մէջ ու անոնց կը թելադրէ աղտոտ ու լրճուկ գործեր... Ռ. Կարապետեանը այն ցած ու անուղղելի տիպարներէն է վերջապէս, որոնք հրաշալի կերպով կը յարմարին Սագունի-Արզու մանեանց դոյզան բոլոր միջին ու անխոստովանելի նկատուեցներուն:

Գուցէ չհաւատան շատեր, երբ ըսեմ թէ այդ հրէշային ներկայացուցիչը, նոյն իսկ ոճրագործութեան սկսած է մղել իր խղճալի արքանեակները...:

Ի՞նչ արդիւնքի կը կարծէ հասնիլ սակայն այդ տխուր ուղղութիւնով:

Բայց այս կէտին վրայէն առաջ մը ուր կանցնիմ: Միայն թէ ի՞նչ շատ լաւ կը հասկնայ զիս...:

Ի՞նչ պիտի ըսէ վերջապէս իրանց, տգիտութեան ու ապշեցուցիչ տիմարութեան այլանդակ խառնուրդ սառնակարելի՝ ներկայացուցիչը, Համարաճում Արզումանեանցի զուտ դաւադրական նամակին համար: Այդ մասին սակայն Պ. Կարապետեան ու համախորհուրդը շատ թափանցիկ լուծութիւն մը ունին:

Եւ արդէն անհարկն է, բացարձակապէս անհարկն, ու եւ մեղմացուցիչ պարագայ մը գտնել այդ նամակին մէջ: Հաստատաբար ոգիս ու դաւադրութիւնը այնչափ յայտնի է հոն, որ Պ. Ներկայացուցիչը ստիպուած է պապանձիլ:

Այսպէս ուրեմն, ատենց պէտք է որ պատասխանէ Պ. Ռ. Կարապետեան, ինչպէս նաեւ Պ. Գ. Չիթճեանի «Բիշ մը դատողութիւն» վերնագրով շարք մը յօդուածներուն: Մէկ կողմ թողնելը հերթի է:

Տէ՛, թեղ տեսնամ, սիրուն տղաս. առանց այլ եւ այլի հրապարակ իջիր ու տեղդ պաշտպանէ նայի՛մ: Սակայն եթէ նորէն լիրբ յանդգնութիւնը ունենաս ձեռքը չյարմարող գրիչդ կոյուղիներու մէջ թաթխելով թուղթ մրտալի, այն

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՎԱՆԱՅ ՁՈՋԸ

— Բայց ես ի՞նչ յարաբերութիւն ունիմ ձեր «քաջաղ ըսուած Աւազակներուն» հետ:

— Կը խնդրեմ, պէ՛յս, ատանկ պարագայ առարկութիւններով ժամանակ չանցունենք: Նախ՝ այդ «քաջաղ»ները ծանօթ են ձեզի ու դուք աղէկ գիտէք թէ անոնք աւազակներ չեն, այլ հայ գիւղացիներուն գէնք ու ռազմավարք բաժնող մարդիկ են, որ ոչ կուէ կը վախնան, ոչ ալ մահէ: Ասիկա ոչ թէ դուք, ոչ թէ ձեր ամենէն սղէտ գեղացին, այլ օրորոցի մանուկն անգամ լսած է եւ գիտէ: Հետեւաբար ի՞նչ որ ալ ըսէք, ինչ որ ալ առարկէք, ես պարզապէս ձեր վստահութիւնները կուտամ եւ չեմ վշտանար: Դիտե՛ք որ Աստուած կը նայի մեր վրայ եւ կը տեսնէ ամեն բան: Դիտե՛ք որ ժողովուրդի մը առաջնորդը, մեծաւորը միեւնոյն պարտականութեան ներքեւ կը գտնուին անոր թշուառութեան հանդէպ եւ պատասխանատու են: Ըսէ՛ք, պէ՛յս, ինչո՞ւ համար արիւնը կը թափուի մեր եւ ձեր մի-

ջեւ... Ի՞նչ կանցնի մեր ձեռքը, երբ արգելք կը հանդիսանանք ձեր քայլերուն, կամ թէ ի՞նչ կը շահիք դուք՝ մէկ երկու քուրտեղ սպաննելով: Մի՞թէ՞ երկուքնիւ ալ մեր վրայ տիրող կառավարութեան շահերուն ծառայած չենք ըլլար ատանկով: Մի՞թէ՞ այն լուծը, որ դարեւրէ ի վեր կը ծանրանայ ձեր ժողովուրդին վրայ վրայ, միեւնոյն ատեն չը ճնշէ՞ր մեր ուսերուն վրայ: Ի՞նչու համար չը հասկցունենք մեր ժողովուրդներուն թէ այն երկիրը ուր թաւրքը կը տիրապետէ եւ անոր սուրը կը չողայ յաղթանակօրէն, մեր հայրենական ժառանգութիւնն է, թէ մենք ժամանակաւ տէրն էինք անոր եւ այսօր ստրուկներ դարձած ենք, եւ թէ վերջապէս, փոխանակ մեր աշխատութիւնը տալու կառավարութեան, մը... քէտքէտ է մենք վայելենք զայն: Որո՞ւ կիցնայ զայն ըսել, առանց սին նկատուեցներու եւ առանց վերապահումի: Ո՛չ ապաքէն ձեզի՛ որ ժողովուրդի մը գլուխը կը գտնուի, յետոյ կրօնաւորներու, որ անոր առաջնորդը կը չուելու պարտականութիւնն ստանձնած ենք: Ըսէ՛ք ի՞նչ կը մտածէք... Թողունք որ մեր ազէտ ժողովուրդներն իրարու դէմ ելնեն ու զիրար ջարդեն՝ կառավարութեան մը չափերուն համար:

Ձոյ՛ք խուսափողական պատասխան մը տալու միջոց մը չգտաւ. հետեւաբար կիցկուր բացատրութեամբ մը հետեւեալ պատճառաբանութիւնը մէջտեղ բերաւ եւ ճնշուած ձայնով մը հարցուց.

— Ուրեմն դուք համոզուած էք որ ես այդ այդ «քաջաղ» կողմուած մարդիկը կը ճանչնամ:

— Անշուշտ:

— Կը սխալիք, Շէյխ Էֆենտի, կը հաւատացնեմ ձեզ թէ այդ կարգի մարդիկ չեմ տեսնել եւ քուս չեմ ճանչցած: Եթէ երբեք եղած է որ անուններն լսած իսկ ըլլամ, այդ ալ կառավարութեան տեղեկագիրները կարգադրուած ժամանակ աչքիս զարնուած է:

Բայց գալով գեղացիներուն՝ կը խոստանամ համոզել զանոնք որ հանդարտ մնան ու չխաբուին «քաջաղ»-ներու ստապատիւ խօսքերուն:

— Կը կարծէ՞ք թէ գեղացին ատանկով չպիտի երթայ այն մարդոց հետեւէն, որոնք իր բարօրութեան համար կաշխատին եւ իր պատուին, իր ստացուածքին համար արեւն կը թափին: Ըստ իս երբ դուք համարձակիք բառ մը հանել ձեր բերնէն, ամենէն վատ ու ամենէն թրքամու կը համարուիք:

Կուզէ՞ք որ վատ ու թրքամու անուն տան ձեզի:

— Գեղացի մը չպիտի համարձակի այդ ատոման լրբութեան դիմել:

— Եթէ երբեք մինչեւ այսօր չէր համարձակած, դիտե՛ք որ այսուհետեւ պիտի համարձակի:

— Ուրեմն:

— Պէտք է անոր ցաւը ճանչնալ... անոր վէրքը քննել ու այնպէս բռնաբարել: Ես մանկութիւնէս ի վեր հայերու մէջ մեծցած եմ եւ գիտեմ թէ ի՞նչ է անոր նկարագիրը: Չեմ ուրանար, կրկին աշխատաւորն է ան. անոր քրտինքը մեր ապրուստն է: Ուր որ հայը նուազ է, առհասարակ ամայի ու խղպար մնացած է: Ասիկա անկեղծ արտայայտութիւն մըն է, պէ՛յս, ոչ թէ ձեզի հաճելի ըլլալու համար գովաւոր մը: Հիմակ որ փոխուած է անոր հոգեկան տրամադրութիւնը, հիմակ որ իր անձնուէրը գաւազնեւորուած ձայնը լսելու հարկադրուած է, պէտք է որ

ատեն ուրիշ բան չուրիք քննարկել, եթէ ոչ խոշոր թուք մը փակցնել առաջին երեսիդ ու նորէն զրկել քեզ հոն, ուր պարկեշտօրէն հագգ կը ճարակի գրաշարութիւն ընելով:

Յիւլիպէ, 29 Մարտ 1903.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԻԱՍՏԱՆԷՆ

Սալմաստ 25 փետր. 1903.

«Ե՛քն որ ընկնի, դանակ կը շատանայ» ասում է հայկական առածը. Սալմաստում դստուկ ոտարականներն են որ մի քանի տարիներէ ի վեր առաջնորդում են անմասն զէպի բարոյական սպանդանոց եւ պարզում անգութ կտորիներէ դանակի առաջ: Չեղաւ մէկը, որ խիղճ ունենար զատ տեսնելու եւ ստուգելու թէ այդ դանակներէ քանակներէն են ինքնօրինակ ամբողջ զոհերի պարսնոցներն էլ իսկապէս արժանի էին կիւնքօրինի «Իրաւունք» միայն եղաւ, որ հոսմաձայն իր անուան եւ ուղղութեան խումբագրական մի նկատողութեամբ պահանջեց թղթակիցներէ յիշելու յականջ յանուանէ օտարականներից ներանց, որոնք հեղինակներ են եղել նկարագրուած սարսաղագրիկ եղեռնագործութիւնների, քստմեցուցիչ բռնաբարութիւնների եւ հրէշային շահատակութիւնների եւ այդպիսով էլ արժանի են եղել եկեղիւյսի անուան, որպէսզի կարելի լինի երեւան բերել իսկական յանցաւորին եւ տալ նորան բարոյական պատիժը. Բայց տարաբաղաբար թղթակիցներից եւ ոչ մէկը չէ կատարեց այդ արդար պահանջը, որովհետեւ նոցա նպատակ չէ եղել ներկայացնել ընթերցողներին ժողովրդի իսկական ցաւերը, այլ վրէժ լուծած լինել իրենց անձնական հակառակորդներից եւ կամ իրենց հետ տարակարծիք եղողներից: Թղթակիցների այս կատարելէ եւ պատկանում եւ «Գարեգին» կեղծանունով տակ թագնուած «Շարժում» թղթակիցը: Օտեան Տէր Դէորդ քահանայի նկատմամբ տաժած իր վրէժխնդրութեան ծարուր երեւել չէ կարողացել յազգեցնել նորա կենդանութեան ժամանակը. ուզում է նորա 15

ամսեայ գերեզմանից հանել պակաս թողածը գրապատելով նորան պանութեան, աւագակութեան, խաչագողութեան եւ այլն ծանր յանցանքների մէջ: Լաւ չէր լինի՝ արդեօք որ Պր. Գարեգինը ցանձն առնէր հաստատելու փաստերով Տէր Դէորդի գործած սպանութիւններն ու աւագակութիւնները, ինչպէս որ հաստատել փորձած է նորա խաչագողութիւնները: Վանի որ ամբաստանեալը կենդանի չէ եւ ամբաստանողն ալ փաստեր չէ ներկայացրել նորա մարդասպան եւ աւագակ լինելու մասին, Ատրպատականի առաջնորդարանին եւ Հալթիւի հոգաբարձութեան վրայ է ծանրանում այս խնդիրը պարզելու եւ արդարութիւն երեւան հանելու պարտականութիւնը: Յայտնի է որ հանգուցեալ Տէր Դէորդը ամենազարգացած քահանան է եղել ոչ միայն Սալմաստում, այլ ամբողջ Ատրպատականում. ուստի անխղճութիւն է գրապատել նորան «խոնարհեցո՛ւ ապրեցո՛» չգիտնալու չափ տգիտութեան մէջ: Անգթութիւն է նմանապէս գրապատել նորան Հալթիւի գրաբարանի փողերի եւ գրքերի յափտակութեան յանցանքի մէջ. որովհետեւ արդարաւանի վարչութիւնն է եղել այդ գումարը Տէր Դէորդին տուողը, իբրեւ նոյն ժամանակուայ դպրոցական տեսչին, համաձայն գիւղական հոգաբարձութեան խնդրին, որովհետեւ խնամասորի քննադատելի արշաւանքի պատճառով, ինչպէս Սալմաստի հայաբնակ գիւղերը, նոյնպէս եւ Հալթիւի ծանր տուգանքների ենթարկուած լինելով՝ անկարող էր եղել վճարելու ամբողջ ծախքերը, ուստի նոյն տեսչի միջոցով դիմած է եղել գրաբարանի վարչութեան օգնութեանը, ինչպէս որ հաստատում են այդ Ատրպատականի հայոց Առաջնորդարանի, Հալթիւի Հոգաբարձութեան ու «Գրասիրաց» ընկերութեան արձանագրութիւնների եւ հաշիւների աւանդները:

Գալով կեղծ մուհակներ չէնելու խնդրոյն, դա թղթակցի Իրեւակայութեան մէջ միայն գոյութիւն է ունեցել: Իրականութեան մէջ այդպիսի մի խնդիր չէ եղել երբեք Հալթիւում: Պարզեւ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Քութայիսի (Ռուսիա) մէջ վախճանած է Յակոբ Ազաւան անունով հարուստ վաճառականը: Հանգուցեալը բարեգործական նըպատակներու յատկացուցած է 30,000 ռուբլի չափ գումար մը, որոնց 10,000ը սահմանած է Պագուի Մարգարիտական ընկերութեան, Հանգուցեալ բարերարը, իր կենդանութեան միջոցին Արասթումանի հայոց եկեղեցիին ծախքերն ալ հոգացած էր:

— Վեհ. կաթողիկոսը այս միջոցին Թիֆլիս կը գտնուի:

— Բեդրսպուրկի հայոց եկեղեցւոյն հոգաբարձութիւնը վասիլէֆսի կղզիին մէջ սեփական տուն մը շինել տալու վրայ է, տեղական հայոց բոլոր բարենպաստ հիմնարկութիւնները հոն զետեղելու համար:

Կըսուի թէ շէնքին օրհնութեան ու բացման հանդէսը պիտի կատարուի Բեդրսպուրկի հիմնարկութեան 200 աւանայ յոբելեանին առթիւ:

— Ս. Էլմիածինի վանքին մէջ կազմուած է 6 անձերէ բաղկացած Ուսումնական Գանձաժողով մը. այդ Գանձաժողովոյ պաշտօնը պիտի ըլլայ խորհրդակցութեամբ կառավարել Էլմիածինի Մատենադարանը, տպարանը եւ «Արարատ» ամսագիրը:

— Սոքրանդակ կը գրէ իր մարտ 26ի թիւով. «Պուկարիոյ Այցելու Հովիւ» Տ. Վահան վրդ. Եպիփանայ այս շարժում ճամբայ կենել մայրաքաղաքէն դէպի Ֆիլիպէ, Չատկական տունը հոն անցընելու համար: Տ. Վահան վրդ. պաշտօնը հաստատող Պատր. կոն.

դակը եւ ուրիշ պաշտօնագիրներ պատրաստուած են: Պուկարիոյ բոլոր եկեղեցիաց թաղ. խորհուրդներուն շարքերական գրքեր ղըրկուեցան, որոնց մէջ ծանուցուած է Տ. Վահան վրդ. Պուկարիոյ հոգաբարձութեան կողմից, խառն ժողովոյ որոշմամբ:

— Նաւեթտա հայ դերասանական խումբը իր խմբագրութեամբ պահանք ի նպատակ ներկայացուցած է, Յիւլիպէի մէջ, անցեալ հինգշաբթի գիշեր, Հիւկոյի Արքայն զբօսնող թատերաստը: Ներկայացուած շատ յաջող անցած ըլլալով, հանդիսականները՝ որ ի քաջալերութիւն Տ. Պագաւանի բազմաթիւ էին, խիստ գոհ մնացած են:

— Գերման սպայ մը, Ֆոն Տէր Մայէր, որ այժմ գործունեայ սպայէզէն քաջուած է, Սուլթանի կառավարութեան կողմէ արտօնութիւն ստացած է դէպի Էնկիւրի, Տիարպէթի, Էրզրում ու Հալէպ նահանգները ուղեւորութեան մը ձեռնարկելու: Այս ուղեւորութեամբ Մայէր սպանապատակ ունի նոյն տեղերու ժողովուրդներուն վիճակը ուսումնասիրել:

Չենք գիտեր թէ այս ուսումնասիրութիւնը մասնաւոր կարգադրութեամբ մը համաձայն պիտի կատարուի, եթէ ոչ անկեղծութեամբ:

— Խմբագրութիւնն շնորհակալութեամբ ստացած է «Վասպուրականի իրական կեանքից» անունով վէպ մը, ԳՈՂ ՄԺԴՈ զոր Ալէքսանդրիոյ «Արաքս» տպարանը հրատարակ հանած է: Վէպը գրուած է Ռուսահայ բարբառով. հեղինակն է Նշիկ Երէց: Գիրքը 2 ֆր. է. Գոյացած հասոյթը պիտի յատկացուի հայ որբերու:

մասնաւոր անոր ու հասկցնէք իր դերը: Չէ՛, մի կարծէք թէ հայը ցնորական գաղափարի մը կը ծածայէ: Ամենեւին: Ես այդպէս չեմ մտածել: Ընդհակառակը, կրեմ թէ՛ հայը գերաբնակ յուծելու ակաւի կողմէ իսկ քուրք կը մնայ...:

— Բուրբուր գերի չէ, Եէյիս էֆէնտի, առարկեց ջողը կիցկուտը առարկութեամբ մը:

— Ինչպէ՛ս գերի չէ... մի՛թէ լեռներու մէջ ապրող ու դարձել ի վեր իր ազգային ինքնուրոյնութիւնը չը ծանցող ժողովուրդ մը, ձեր կարծիքով, ազատ կը համարուի: Ո՛չ: պէյս, ո՛չ... մեր մէջը, անոնք որ գիտեն նախնեաց պատմութիւնը, քնաւ այդպէս չեն մտածել, ինչպէս որ դուք ալ հարկ չէ որ մտածէք: Այո՛, ես կարգացած եմ եւ աղէկ գիտեմ թէ ընդարձակ եւ բարեբեր աշխարհ մ'ունէինք մենք ու մեր թագաւորները մեծ ու յաղթող եղած են: Թուրքը դե՛ռ երէկուան ազգըն է որ մեր վրայ արշաւելով կարողացած է տիրելու: Աս ալ մեր երկու ցեղերուն անհամարաչափութեան արդիւնքն է. մանաւանդ՝ մեր եւ ձեր միջեւ խոր խրամատ մը բացող կրօնական տարբերութիւնն է: Բայց բաւական է ո՛րչափ որ անասուններու պէս լեռան անձաւներու մէջ կ'սնդ մ'ունեցանք. բաւական է ո՛րչափ որ անգիտակից ժողովուրդ մ'ունեցանք: Մեր փախաքն է ձեռք ձեռք տալ ձեզի հետ ու պահպանել ազգային գոյութիւնը: Ահա՛՛ գալուս նպատակը: Բնաւ մի կ'սկսածիք... ես ոչ լրտես մընեմ եւ ո՛չ ալ կ'առաջարկեմ շահուն ծառայող մը. այլ հայրենիքիս ու ազգիս սիրոյն համար անձնաւորող կրօնաւոր մընեմ, որ կը քարոզեմ, կը խրատեմ ու այս գաղափարով կը համակրի ժողո-

վուրդս: Ո՛վ որ ճշմարիտ Գուրա է ու իր հայրենիքը կը սիրէ, իմ ետեւէս կուգայ ու իմ ձայնս կը լսէ:

— Վանայ քաղքին ջողը չէր գիտեր ի՞նչ կերպով գոհացում տալ, ուստի ճշուշտ ու չափուած հարցում մ'ըրաւ:

— Շատ աղէ՛կ, Եէյիս էֆէնտի, ի՞նչ կուգէք որ ընեմ:

— Ձեր մեծութիւնը, չեչտեց Եէյիս բացազանապէս ձայնով մը:

— Այո՛:

— Դուք խոստացէ՛ք որ աշխատելու, ի պահանջել հարկին, գոհողութիւններ ալ ընելու պատրաստ էք: Ան ատեն կը յայտնեմ թէ ի՞նչ պիտի ըլլայ ձեր դերը մեր ստանձնած այս Մեծ Դարձին մէջ:

— Կը խոստանամ, թո՞ղտո՞ղ ջողը խղճուելու մօտ բացատրութեամբ մը:

— Պէ՛տք է երգիւթ... չեչտեց Եէյիս:

— Կ'երգում'եմ...:

— Կ'ըմբի՞ք վրայ:

— Կ'ըմբիս վրայ:

Եէյիս պահ մը լռեց: Յետոյ իր խորաթափանց ու մեծ աչքերը սեւեռեց ջողին վրայ, դատաւորի մը պէս՝ որ երկար հարցաքննութիւնէ մը հտքը կը յաջողի յանցապարտ մը խոստովանեցնելու:

— Ուրախ եմ որ Ձեր Մեծութիւնը կը խոստանայ մեզի հետ միասնալու, մընջեց Եէյիս՝ խելայեղ ձայնով մը: Ահա՛՛ կ'երթամ ես... ու իմ աշխիթներու մէջ ամէն պատրաստութիւն կը տեսնեմ: Ժամանակը չենք կորսնցունել: Կառավարութիւնը չը կընար գլուխ կենել այն ժողովուրդներուն դէմ, ո-

րոնք իրենց բերնէն անգամ մը սա բառերը կը հանեն. «Ազատութիւն կամ մահ»: Կերթամ, այո՛, եւ վստահաբար պիտի ջանամ սկսելու այն Գործը՝ որուն համար ձեր նուիրական երգումը տուիք: Ուրեմն միաք-յարով, պէյս: Գիտցէ՛ք որ իմ եւ ցեղակիցներու ուժը ձերն է... դէպի ապագան յանցե՛ք աչքերնդ այսուհետեւ եւ վստահ եղէք...:

Ու Եէյիս վերջացնելով խօսքերը միկնեցաւ:

Ջողը հետեւեցաւ Եէյիսին մինչեւ դուռը. յետոյ վեր ելաւ ու բազմոցի մը վրայ իյնալով, մընջեց ինքնիւրեք:

— Տէր Աստուած. ի՞նչ ըրի ես... ի՞նչ խօսեցայ: մատնեցի ինքզինքս անձանոթ մարդու մը ձեռք... տունս փլցուցի... զաւակներուս երջանկութեանը մէջ արեւն խառնեցի... ընտանիքս կործանեցի...: Ա՛խ, գուցէ՛ քիչ յետոյ կ'առաջարկեմ իմ Գուռնէն ներս կը մտնէ այդ ծպտեալ մարդը. կը պատմէ իր ըսելիքները, կը հասկցունէ թէ գործը վարպետութեամբ կարգաւորած է եւ թէ բոլոր ապագոյցներն իր ձեռքին մէջ են...: Կուսակալը, ոստիկանագետը, մանաւանդ թուրքերը պիտի ճանչնան զիս եւ պիտի գոչեն. «վա՛յ, անխձամ կեալուր, դուռն ալ հէ՞... թէ՛ մեր հացն ուտես եւ թէ՛ ուրացող ըլլա՛ս...»: Ի՞նչ պիտի ըլլայ վիճակս... ո՛վ պիտի ըսէ որ աղէկ ըրած եմ ես...: Ձերբակալութիւն, բանտարկութիւն, արքայ... վերջապէս կ'առաջան անգամ կ'ընան տանիլ զիս...:

(Շարունակելի)

ՆՈՐ ԴԵՊՔ ՎԱՆԱՑ ՄԷՋ

Պարսկա-թուրք սահմանագրւ-
խէն Մարտ 3 թուականի նամակէ
մը հետեւեալը կը քաղենք .

«Վանից ստացուած ուրախալի
լուրերի շարքումը կայ եւ հետեւե-
ալ ցաւալի դէպքի համառօտ պատ-
մութիւնը .

«Վանում պահուած երեք Դաշ
նակցականներին են հանդիպում գի-
շերապահ զինուորները և պահան-
ջում են անձնատուր լինել . բայց
նորա չեն լինում , որով և առաջ է
գալիս փոխադարձ հրացանաձգու-
թիւն , սպաննում է փախստա-
կաններէ մէկը և ձերբակալուում
են երկուքը , գիշերապահներէ մէկ
վերադարձում է միայն մի փոխա-
ն .

Ռուսահայ չնչնակի վերջին թի-
ւին մէջ կը կարգանք սահմանագր-
իւն ստացուած նամակի մը հետեւե-
ալ տղերքը .

«Այս րոպէիս լուր ստացաւ , որ
Վանում հայերի և թուրքերի մէջ
արեւնահեղ մի դէպք է պատահել
որի ժամանակ 100ի չափ հայեր
եւ թուրքեր են սպանուած . Ման-
րամանուկ իւնները տեղեկանալով
յաջորդել կը գրեմ » .

Ի Խ Թ Ա Ր

Էլան պորճարընը էտեմէմիշ օ-
լան ապօնէլէրիմիզին , պախուսուս
քէօլլէրտէ պուլըննարըն՝ Զա-
տիկ էրթէսինէ գատար՝ կազէթա
պէտէլաթընը կէօնտէրմէլէրի սօն
տէֆա օլարագ իխթար օլունուր :

Պու տէֆա տախի սիւքիւտ գա-
լանլարա Զատիկտէն սօնրա կա-
զէթա եօլլանլարա ճաղընտան մա-
տաա , մաթլուպըմըղը ալէնէն թա-
լէպ իթմէթտէ սէրպէսթ օլաճաղըզ :

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ
ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Կէչէն հաֆթա Միթրօփիցատա
պիր արնապուտ ասքէրտէն եարէ .
լէնմիշ օլան րուս գօնսօլար Մ .
Շէրէպինա մէղթիւր հարէսինտէն
միւթէսիւրէն ապրիլ 9 ագչամը
վէֆաթ իթմիշ տիր :

Վիէննա կազէթալարըն պէյանը-
նա կէօրէ , րուսիա տէօվէթի ճա-
նիէ հիւքմ օլընան 15 սէնէ քիւ-
րէկ ճէզասընը խաֆիֆ ատտ ի .
տուպ , եէնիտէն մուհաքէմէ օլըն-
մասընը թալէպ իտէր իմիշ :

Սուլթան Համիտին թախթա
ճուլուսընտան պէրու իսլամար է-
լի իլէ գաթլ օլընան իւզ պիւլէր .
ճէ խրթաթիյանլարըն գաթլիւրին-
տէն հիշ պիրսինէ իտամ ճէզասը
հիւքմ օլընմամը տըր . զիրա պիր
միսլիւմանը կեապուր գաթլ իթ-
միշ օլմասը սէպէպլէ իտամա մահ-

քիւմ իթմէթ չէրան ճախիզ տէկիլ
տիր : Պու տէֆա տախի գաթլի
իպրահիմի իտամա մահքիւմ իթ-
մէմէթ իշիւն իթիւրը հիւքիւմէթի
սէպէպլի միւլէտտէտէ գուհուր իթ .
մէմէսի իշիւն մէճրուհ կեապուրըն
էօլմէսինտէն էվիլէ , չար չապուզ
մուհաքէմէսինէ խիթամ վէրտի .
Պիր իսլամ իշիւն 15 կեապուր ա-
սըլըր , ֆազաթ պին պէշ կեապուր
իշիւն պիր իսլամ ասըլմազ . էն չօգ
տահա 5—10 սէնէ իշիւն մահ-
պուսիլէթ հիւքմի վէրիւրէր . ֆա-
զաթ պիր գաշ հաֆթա սօնրա էլ
ալթընտան սէրպէսթ պըրագըլըր :

Ատալէթի պու եօլտա մուպազէ-
նէ իտէն թիւրք իտէրէսի ալթըն-
տա խրիսթիանլարըն եաշամասը
միւմքին օլմազ վէսսէլա՝ :

— Սթանպօլ թիւրք մէնպասըն .
տան ալընան թէլէկրաֆ հապատի-
սինէ պինտէն , Պուկարիատան 100
քիշիւք պիր չէթէ Մատաֆա-Բա-
շա սինօրընտան Մաքէթոնիայա
կէչմիշ :

— Ապրիլ 10տա Սթանպօլտա
Պէյ օլլու թարաֆընտա իքի աա-
քէր արնապուտ րէվօվէր չէթիւպ
պիր չօգ աթէշ՝ իտէրէր իսէտէ
գուրչուն հիշ պիր քիմսէյէ թէսա-
տիւֆ իթմէզ . Արնապուտ ասքէր .
լէրին իէրաաա պու նիլսուսըզըրգ .
լարը թիւրք իտարէսինին իսլահաթ
գապուլ իթմէթէկինէ հէնի պիր
տէլիլ տիր :

— Թաշմըզըն մուխպիրի Մա-
քէթոնիա անվալընտան չէօլլէ մա-
լիւմաթ վէրիյօր :

Խրիսթիան էհալի գօմիթէ չէթէլէ-
րինէ հէր նէվ մուալէնէթտէ պուլը-
նըյօր . քէօլլիւրէրին եարտըմը օլմազ-
սըզըն չէթէլէր հիշ պիր չէյ եաքա-
մազլար :

Արնապուտար իսլահաթա գարչը
գալկալա տէվամ իտէճէզլէր . Սուլ-
թանըն արնապուտ պէյլէրինէ վէրտի-
կի պախիշլէրին վէ րութպէլէրին է-
հալի էնտինտէ էնէմիլէթի եօղտըր ,
զիրա պուլնար էթէտէն պէրու էլտէ
իթմիշ օլտըզլարը իմթիազաթը թէրք
իթմէթ իսթէմէյօրլար , վէ գանտըր-
մազ իշիւն Սթանպօլտան եօլլանլը-
մը օլան զէվաթըն զայրէթի սէմէրէ-
սիզ գալաճազ :

Ումումի միւթէթիւշ Հիւլի Բաշա-
նըն Սքիւպտէ վէ իղթիպտէ պուլըն .
մասը Արնապուտարըն հարէքաթընը
թէսքին իտէմէսի : Բաշանըն իշիւթի
կիւզէլ վէ միւթէթտի պիր գաթլ տըր .
ֆոգաթ ելտըզ Բէօշլիւնտէն ալտըզը
էմիլլէրի եալընըզ իճրա իթմէկէ մէ-
զուն տըր :

Հիւլի բաշա քէնտիսի տախի իսլա-
հաթըն քէֆալէթսիլիկինի իթիւրաֆ
իտէյօր վէ պու պապտա Բուս վէ Աւս-
տրիա տէօվէթլէրին նէ գանաթ հա-
սըլ իթիւրէլէրին սիւվալ էյլէյօր :

— Կէչէն հաֆթա Սթանպօլա կէլ-
միշ օլան Ալման վէլիւհուր վէ պի-
րատէրի պիր գաշ կիւն Սուլթա-
նա միսաֆիր գալտըզտան վէ բաի .
թախթը կէզտիքտէն ոօնրա , իա-
լիֆէնին էլիւի բուս իտէրէք , պի-
րէր «Ալ Օսման» վէ «Իլիթիազ»
նիշանլարըն եւ տիկեաթ ալուպ կիթ-
տիլէր : Պու միւնասիպէթլէ իմ .
բէրաթօր վիլհէլմ իշիւն տախի

Սուլթան պիր առէտ բէք գըլմէթ .
լի ճըլըճ հէտիէ կէօնտէրմիշ տիր .

— Ելտըզտան Ալմանիայա սօն
տէֆա եօլլանլան ասքէրիէ գօմի .
սիօնը արնապուտարը տաղըթմազ
իշիւն էլան գանտըրաճամը տըր :

Միթրօփիցայա եազըն վէ Սքիւպ
ճիվարընտա թօրլանմը օլ իս-
լամ արնապուտարըն կիճէ վազթը
չէհիւէ հիւճում իթմէլէրինտէն
գօրգուլըյօր : Բէվալէթէ կէօրէ
էկէր պու սօն գօմիսիօն գաթիւն
սէմէրէսիզ գալըր իսէ , իզմիրտէն
ճէլպ օլընան 20,000 ասքէրէ եա-
վաշ եավաշ Սքիւպիւն էլթրաֆը-
նա թօրլանալ , արնապուտարըն
իւզէրինէ իւրիւմէք իշիւն Սուլ-
թանտան էմը վէրիւմիշ իմիշ :

— Պիր կազէթանըն պէյանը իւզ-
րէ , ինկիլիզ էլիսի պիր միւլա-
գաթտա Մաքէթոնիա իսլահաթ
իշիւն չէօլլէ սէօլլէմիշ :

«Թէքլիֆ օլընան իսլահաթ իճ-
րա իթմէք իշիւն Սուլթանա վա-
գըրթ վէ միսաաաա վէրմէք պա-
պընտա պիլիւն պէօյիւք տէվ-
լէթլէր միլթիթիթ տիրէր : Է-
կէր Մաքէթոնիա իսթիլալը տա
հա պիյաաա արթար իսէ , ասաիշի
իպգա իթմէք իշիւն . Թիւրքիանըն
էլլէրի սէրպէսթ օլմալը տըր » :

Պու սէօլլէր էկէր սահիհ իսէ ,
« պըրա՛վօ » տէվլէթլէրէ :

ՏԱԽԻԼԻՑԷ

Վարնա ուրբալիթէլի Մ . Սթանչէվ
թէրֆիի մէմուրիլէթլէ Սօֆիայա
ո բրալիթէլ նասպ օլունմը օլուպ ,
բազար կիւնիւ չէհիմիլտէն միւ-
ֆաթէթ իթտի : Մուսուլլէյհին
հիւսնի հարէքէթիւնտէն տօլալը
չէհիմիլտէն միւթէմէքըն հէր պիր
միլլէթ մէմուր զալմը ըտը . պա-
խուսուս միլլէթտաշլարըմըզօ իպ-
մալ իթտիկի խալլիսալըզ ունու-
տրլմալաճազ տըր :

— Պօրիս լլարաֆօլլէն թիւրք
ասքէրլէրինտէն թուլուլտըղընա
տալիլ չըզմիշ օլան հապատիս է-
սասսըզ տըր :

— Սօֆիատան վէրիւն պիր թէ-
լէկրաֆա պինտէն Սթօհանպըն
գօմանտասը ալթընտա պուլընան
պիր չէթէ Սէրէզէ եապըն թիւրք
ասքէրլէրի իւզէրինէ հիւճում իթ-
միշ օլարագ անլէրտէն 140 քիշի
էօլտիւրմիւշ : Տիկէր պիր չէթէ
տախի Բէթիլիճիվարընտա թիւրք-
լէրէ պէօյիւք խասարաթ վէրմիշ :

— Պուկարիատան թիւրքիայա
գօմիթլէրին կէչմէլէրի իշիւն
սըզը թէտպիրլէր էլէ ալընմասը
պապընտա Բուս վէ Աւստրիա տէվ-
լէթլէրի եէնիտէն Սօֆիայա թա-
լիմաթ վէրմիլլէր : Պու սէպէպլէ
Պուկարիա սինօրա եէնի ասքէր
եօլլալօր :

Բ Ո Ւ Ս Ի Ա

Բէթրսպուրկ կազէթալարը Մա-
քէթոնիատաքի չու սօն վուգու-
աթլարտան պէրու իսլահաթըն
քիֆալէթսիզ օլտըղընը կէօլմէր :

մէքտէ տիրէր : Վիէննաաա տախի
պու պապտէ էֆքեար եաերմազ-
տա տըր : Բուս գօնսօլարըն
նասիհաթլարը զալլը պուկարլար
իշիւն էհէմմիլթսիզ գալտըղը , վէ
ճէնէպի թէէսիլի արթըզ քեար
իթմէլէնէկիլի րուս կաղէթալարը
եաղրօլար :

— Զար եէնի պիր էլիւնտմէ իլէ
Ֆիլիանտիանըն գանուրն էսասիսի-
նի վէ իտարէլ մախսուսէսինի
լազլ իթտի : Ժէնէրալ Պօպրիգօ-
վա տախի մէնգուլիլէթի թամմէ
վէրմիշ օլուպ , պու մինասիպ կէօր-
տիւկի իւզրէ Ֆիլիանտիատա թէշ-
քիլաթ իճրա իթմէկէ պաշլամը
տըր : Ֆիլին օրտուսընը լազլընտան
սօնրա ասքէրլիկէ չաղըրըմը օլուպ
տէ էմիէ իճապէթ իթմէմիշ օլան
Ֆիլին տէլիգալլար տէրտէսթ օ .
լուլըյօլալ : Նիհայէթ Ֆիլիանտիա
պու կիւնտէն իթիպուրլն քէնտի
օրօնմիլիլէ զալպ իթմիշ վէ Բու-
սիանըն պիր վիլլալէթի չէքիւնէ
կիլմիշ տիր :

ՁԵՐԻՔ

Զատիկ միւնասիպէթի իլէ մէթաա
իւզրէ լէզիլ չէօրէքլէր , գօլաճարվէ
գուգուհաղար հաղըրմըշ օլտըղըմըզ-
տան , տիւքեանըմըզ միւրաճաթ
իտէն րազպէթլու միւլթէրիլէրի մալ-
ճա վէ ֆիաթճա խօշուսթ իտէճէկի-
միլի իւնի իտէրիլ :

Օխրիսաքա սօգաք նօ . 8
ԳԼՈՐԳ ՄԻՆԱՍԵԱՆ

ՏՕՔԹ . Ն . Կ . ԹԱԳԻՈՐԵԱՆ
Նախկին բժիշկ Ս . Փ . Ազգ . հի-
ւանդանոցին Կ . Պօլսոյ , Նախկին
բժիշկ Պուկարիոյ կառավարական
հիւանդանոցներու եւ նահանգաց :
Մանագէտ հիւանդութեանց կա-
նանց եւ աղայոց . նոյնպէս արանց եւ
կանանց զտնազան ներքին եւ գալտի
հիւանդութեանց :

Այս Պուկարիոյ բժիշկը երկար
տարինքէ ի վեր իր արհեստին մէջ
փորձառութիւն եւ հմտութիւն ստա-
ցած՝ եւ երկու տարի առաջ ալ Վիէն-
նայի համալսարանի հիւանդանոցնե-
րուն մէջ աշխատած լինելով , այժմ
հաստատուած է Սօֆիայի մէջ , Պու-
լըվար Տօնտուքօֆ , թիւ 16 :

Հիւանդ կընդունի աւելն օր ժամը
10—12 եւ 2—4 (Ը . Ե .) չորեքշաբթի
օրերը ձրի կը դարմանէ իր բնակա-
րանին մէջ :

2—2



ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ կուզէք հագնիլ կօշիկներ ո-
րոնք իրենց վրայ միացուեն ձեռի եւ
գիւնացկուսութեան կատարելութիւն
եւ մանաւանդ գինի չափաւորութիւն
առանց վարանելու դիմեցէք Ս . Պու-
րասանճեանի . Մուսալլա , Տօքթ .
Պասանօվիչի տանը դիմաց :

Одговорникъ Н. Драгулевъ
Печатница Взаимность Варна.